# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 27 մարտի 2005 թ. )

*«Ես իսկ եմ Յարութիւն եւ կեանք»:*

(Յովհ. ԺԱ 25)

*«Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»:*

(Յովհ. Ժ 10)

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ.

Այսօր մեր եկեղեցիների Սուրբ Խորաններից ասպուածային մեծ շնորհի աւետիսն է հնչում՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Միաշաբաթ էր, խաչելութիւնից երեք օր անց երբ հրաշքը եղաւ՝ յարութիւն առաւ Քրիստոս: Այցալոյսի հետ յարութեան ու կեանքի խորհուրդը բացուեց աշխարհին: Հաւատը շողաց փացնապած ու սրտաբեկ հոգիներին Յիսուսի աշակերտների եւ յետեւորդների, ովքեր իրենց խաչուած Վարդապետին գերեզման դնելուց յետոյ ամեն բան աւարտուած էին համարում: Նրանք լսել էին կենարար խօսքը Յիսուսի, ականատես էին եղել, թէ ինչպէս հիւանդները բժշկւում են, մեռեալները՝ կեանք առնում եւ իրենց սրտի ու հոգու ամենաջինջ զգացումով Վարդապետի անձի մէջ ճանաչել էին Փրկչին. ու այժմ, երբ դատարկ էր Նրա գերեզմանը, երբ հնչել էր յարութեան հրեշտակաձայն աւետիսը, յուսալքուած նրանց հոգիներին փայլատակեց իմաստը Տիրոջ խօսքերի՝ «Ես իսկ եմ Յարութիւն եւ կեանք», «Ես եկի, զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին»:

Յարուցեալ է Քրիստոս: Խաչի վրայ մեղքը քաւուած է, մահուան կապանքների հետ փշրուել են անդարձ յուսահատութիւնն ու երկիւղը, գերեզմանից կեանքն է ճառագում, եւ փայլում է փրկութեան ու անմահութեան յաղթանակած լոյսը: Աստուած է սքանչելապէս փառաւորեալ, եւ մարդն է փառաւորուում, քանզի Քրիստոս խաչը յանձն առաւ եւ յարութիւն առաւ, որ մարդկային մեղքով վնասուած կեանքը նորոգուի եւ հաստատուի իր նպատակի, դէպի Աստուած իր ճշմարիտ ընթացքի մէջ: Խաղաղ եւ արդար աշխարհի սիրով եկաւ Քրիստոս, Աստուծոյ հետ հաշտ աշխարհի, որպէսզի այն, ինչ գործում է մարդը, ինչ ստեղծում է մարդը, ի սէր կեանքի լինի, բարին ու բարիքը լինի: Երկնային Հօր Կամքի առջեւ որդիական հնազանդութեան կատարեալ օրինակը բերեց Քրիստոս, մարդու բարձրագոյն ձգտումը հռչակեց Աստուծոյ նախախնամող, փրկարար Կամքի ընտրութիւնը:

Արդարեւ, սիրելիներ, Աստուծոյ Կամքի. ընտրութեամբ մարդկութիւնը պիտի կարողանայ մերժել ու բացառել Տէր-Զօր եւ Հոլոքոստ, մերժել ու բացառել Սեպտեմբեր 11 եւ Բեսլան, տեսնել պատերազմներից ու բռնութիւններից զերծ ճանապարհները եւ գտնել ազգերի միջեւ եղբայրութեան արդար ու լուսազարդ ուղիները: Յոյսն է ապրում այդ ճանապարհներին, կեանքի, առաջընթացի, ապագայի յոյսը: Այսօր եւ միշտ մարդու հնարաւորութիւնները, ընտրութիւնն ու որոշումն ուղղուած պիտի լինեն հոգալու աշխարհի ու մարդկանց մասին, ինչպէս Արարչի Հայրական խնամքն է արարչագործութեան հանդէպ: Խաչեալ եւ Յարուցեալ Փրկչի հետ գործակիցներ ենք փրկագործութեան, որով եւ ունենք կեանք եւ առաւել եւս կեանք:

Փա՛ռք Բարձրեալին, որ շատ ազգերի կողքին մեր ժողովրդին նոյնպէս պարգեւեց աստուածային փրկարար շնորհի լոյսը: Անդարձ հաւատաց մեր ժողովուրդը Քրիստոսի Յարութեան զօրութեանը: Հայ կեանքը հաց ու գինով է թաթախուն, հայոց հողը՝ վանք ու խաչքարով ծաղկուն: Աղօթքն է հայի խօսքը, որ երկինք է բարձրացել Խոր Վիրապի մահուան գուբից, Մաշտոցեան Գրով մատեան դարձել, դարձել Նարեկայ Սրբի երկնամերձ աղերս ու նահատակների սուրբ վկայութիւն: Յարութեան շողակաթ լոյսով հաստատուած Սուրբ Էջմիածինն է հայութեան հոգին՝ պատմութեան մէջ դարից դար, աւերներից ու մահերից վերածնուած հոգին: Մեր ժողովուրդը չի տեսել Քրիստոսի դատարկ գերեզմանը, բայց Քրիստոսի հետ բազմիցս տեսել է իր համար փորուած գերեզմանների դատարկութիւնը եւ Քրիստոսի հետ յաղթութեան փառքի պսակներ հիւսել: Հայ մարդը չի կարող չհաւատալ Քրիստոսի Յարութեանը: Յարութեան մասին են խօսում մեր պատմութիւնն ու ներկան: Քրիստոսի հետ Մեծ եղեռնի գողգոթան անցանք եւ մեր պատմութեան ամենաողբերգական ժամանակը դարձրեցինք յաղթանակի ժամանակ: Եղեռնահար, արնածոր մեր ժողովուրդը հերոսական մաքառումով ծնունդ տուեց իր նոր պետականութեանը: Մոխիրներից յառնեց Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը՝ ի վկայութիւն մեր ժողովրդի անմեռ ձգտումի հայոց պետականութեան յարատեւ գոյութեան:

Յարուցեալ է Քրիստոս, յարուցեալ է ազգս հայոց: Եւ Լուսաւորչի Կանթեղի լոյսն է մեր ճանապարհը, հաւատով անմար, հաւատով պայծառ, հաւատով տեսանելի լոյսը, որ պիտի առաջնորդի ազատ, միացեալ նոր կեանքը մեր Մայր Հայրենիքի ու հայ Սփիւռքի: Մեր հայրերի հաւատաւոր օրինակով այսօր էլ պիտի յաղթահարենք դժուարութիւնները, Հայաստանի եւ Արցախի, ազգային-եկեղեցական մեր կեանքի առջեւ ծառացած բոլոր խնդիրները:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Յարուցեալ Քրիստոս երբ յայտնուեց իր աշակերտներին, երանի տուեց նրանց, ովքեր առանց տեսնելու կհաւատան Իր Յարութեանը: Երանին մեզ է ուղղուած: Զատիկ է այսօր, նոր կեանքի արշալոյս, աստուածամերձ կեանքի հրաւէր՝ անցաւոր ժամանակի մէջ, նիւթականից դուրս տեսնել Աստուծոյ նախախնամող սէրը, հաւատալ Յիսուսի յարուցեալ զօրութեանը եւ փրկչական առաքելութեանը: Հաւատն է զատկական տօնի պատգամը: Հաւատով է սկիզբ առնում Փրկչի հետ մեր յարուցեալ կեանքը, հաւատով զօրանում ու արգասաւորւում: Հաւատով անձնուիրումը դառնում է բնական, մերձաւորի հանդէպ սէրը՝ երջանկութեան եւ ուրախութեան ակունք: Յարութեան խորախորհուրդ հրաշքն է այս, միշտ դէպի վեր, դէպի երկնայինը, ճշմարիտը, արդարն ու բարին:

Փրկչի Յարութեան հրաշածին շողերից թող ջերմանան այսօր մեր հոգիները, լոյս առնեն առաւել ու յոյս եւ հաւատով զօրանան: Մեր հաւատը թող գծի մարդկային մեր կատարելութեան ճանապարհը եւ լուսաւորի մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ու Եկեղեցու վերածնուած նոր կեանքի ուղին: Ժողովուրդ հայոց, հաւատից լոյսով կեանքդ դարձրու աստուածահաճոյ բանութիւն, որ գործերիդ մէջ սրտիդ զարկը փրոփի, սէրդ շողայ, արդարը, ճշմարիտը, բարին ընտրելու կամքդ յաղթանակի: Այնտեղ, ուր Տէրն է, կենդանի ջրերի գետեր պիտի բխեն՝ համաձայն Աստուծոյ եւ մեր Տիրոջ ու Փրկչի կենսապարգեւ Կամքի: Թող մեր միջոցով հրաշագործ Փրկիչ Տէրը բժշկի, ամոքի ու սփոփի, շէնացնի ու կեանք պարգեւի, առաւել կեանք՝ մեր հողին, խաղաղութեան, ազատութեան, արդարութեան մեր երազներին ու իղձերին:

Յարութեան սուրբ աւետիսով ողջունում ենք ձեզ, սիրելի հաւատացեալներ ի Հայրենիս եւ ի Սփիւռս, օրհնում ենք ձեր կեանքն ու բարի գործերը: Թող Յարութեան շնորհները առատօրէն իջնեն ձեր հոգիներին, զօրացնեն ձեր հաւատը, աւելի լոյս տան ձեր մտքին, աւելի ուժ՝ ձեր բազուկներին, աւելի սէր՝ ձեր սրտերին: Սիրեցէք միմեանց, մեր Սուրբ Եկեղեցին ու Սուրբ Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը:

Յարութեան խնդութեամբ ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Փրկչի առատ շնորհները Տիրախնամ նրանց հօտին:

Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկադի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Զատկական այս սուրբ առաւօտ Յարուցեալ մեր Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած հայոց հողը միշտ ազատ ու խաղաղ պահպանի՝ բարիքով ու ծաղկունքով լցնի: Հայցում ենք, որ Տէրը մեր Մայր Հայրենիքում եւ աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովրդին պահպանի մէկ ու անբաժան, սիրով միաբան, մեր սուրբ հաւատքով, մեր արժէքներով ու ժառանգութեամբ, մեր արդար իղձերի փեսիլքներով:

Թող Յարուցեալ Քրիստոս Իր ողորմութեան ու շնորհի ներքոյ պահպանի աշխարհը համայն անվրդով ու խաղաղ, ազգերը՝ եղբայրութեան մէջ, մարդկանց՝ սիրով, յոյսով ու հաւատով: Ամէն:

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց**

**Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի**